Տեղեկատու թիվ 03 (Մարտ 2024թ.)
Newsletter N 03

Հայ դատի Կենտրոնական գրասենյակ

ՀՅԴ Հայ դատի հանձնախմբերի և գրասենյակների աշխատանքների ամփոփագիր (փետրվարի 15-ապրիլի 1)

Text Link

Հայ դատի Ամերիկայի հանձնախումբ



Senator Rand Paul Leads Senate Vote to Block F-16 Sale to Turkey

Senate Foreign Relations Committee Member Dr. Rand Paul (R-KY) condemned the use of Turkish F-16s in Turkey/Azerbaijan's 2020 attacks against Armenia and Artsakh in powerful remarks today calling upon his Senate colleagues to pass a resolution (S.J.Res.60) blocking the sale of F-16s and other US weapons systems to Turkey.

In powerful remarks on the Senate floor, among the litany of reasons to block the F-16 sale to Turkey, Dr. Paul explained, "The Armenian Ministry of Defense claims that on September 29, 2020, in support of Azerbaijan's war to conquer the Nagorno-Karabakh

region, a Turkish F-16 shot down an Armenian SU-25 attack aircraft in Armenian airspace. Turkey has stood closely by its Azerbaijani ally in its efforts to subjugate the region, providing combat drones, military equipment, training, and, if we are to believe the Armenian government, direct combat support. So our planes that we give to the Turks, the F-16s, are actually being used in another war with Armenia. […] The war in 2020 and Azerbaijan's subsequent military operation in 2023 killed thousands and created a humanitarian disaster, forcing more than 100,000 people to flee, more than three-quarters of the population of that region."
Video of Sen. Paul's remarks on Turkey and Azerbaijan's aggression against Artsakh and Armenia is available at: https://youtu.be/QlYwejjY33w
Text Link

Թուրքիային վաճառվող F-16-երը փաստացի օգտագործվում են Հայաստանի դեմ. ԱՄՆ սենատոր



ԱՄՆ Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի անդամ Ռենդ Փոլը դատապարտել է Թուրքիայի և Ադրբեջանի կողմից F-16-ների օգտագործումը 2020 թվականին Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի դեմ հարձակումներում:
«Արմենպրես»-ի փոխանցմամբ՝ այս մասին հայտնում են ԱՄՆ Հայ դատի հանձնախումբը:
Սենատորը կոչ է արել ընդունել բանաձևը՝ Թուրքիայի կառավարությանը F-16-ների և պաշտպանական այլ ապրանքների վաճառքի համար Կոնգրեսի անհամաձայնության վերաբերյալ:
Թուրքիային F-16-ի վաճառքը արգելափակելու բազմաթիվ պատճառների թվում Փոլը հիշեցրել է Հայաստանի պաշտպանության նախարարությունը պնդումը, որ 2020 թվականի սեպտեմբերի 29-ին թուրքական F-16-ը Հայաստանի օդային տարածքում խոցել է հայկական ՍՈՒ-25 ինքնաթիռ: «Թուրքիան սերտորեն կանգնած է եղել իր դաշնակից Ադրբեջանի կողքին՝ տարածաշրջանն իրեն հպատակեցնելու իր ջանքերում՝ տրամադրելով մարտական անօդաչու թռչող սարքեր, ռազմական տեխնիկա, ուսուցում և, եթե հավատալու լինենք Հայաստանի կառավարությանը, ուղղակի մարտական աջակցություն: Ուրեմն մեր ինքնաթիռները՝ F-16-երը, որ տալիս ենք թուրքերին, փաստացի օգտագործվում են Հայաստանի հետ մեկ այլ պատերազմում»,-ասել է սենատորը:

Text Link



ANCA to Host "Reversing Genocide" Event on Capitol Hill Supporting the Safe Return of Armenians to Artsakh

Armenians and allies from across America will join together on Capitol Hill next week to rally Congressional support for reversing the Artsakh Genocide, ensuring the safe return of the republic's population to their indigenous homeland, reported the Armenian National Committee of America (ANCA). "Reversing Genocide: Securing the Rights and Safe Return of Artsakh's Indigenous

Armenians" will take place on Tuesday, March 12th, from 6 pm to 8 pm at the Rayburn House Office Building Room 2075, featuring remarks by U.S. Senators and Representatives and a keynote speech by Dr. Elisa von Joeden-Forgey, Executive Director of the Lemkin Institute for Genocide Prevention. The human rights organization has been outspoken in calling for international action to address Azerbaijan's genocide against Artsakh's Armenians, issuing a 126-page report in September 2023 and a subsequent Red Flag Alert just weeks ago to "prevent further development of the second Armenian Genocide."
"Western powers must support Armenia in strengthening its sovereign borders and diplomatic position in the region. This includes insisting on Armenian control of any corridors through its territory and imposing sanctions on the Aliyev regime. The United States, in particular, must end the waivers on Section 907 of the Freedom Support Act (1992) and hold Azerbaijan accountable for its actions," stated the Lemkin Red Flag Alert.
Text Link

Ամերիկան պետք է հստակ քայլեր ձեռնարկի և պատժամիջոցներ կիրառի Ադրբեջանի դեմ

Ամերիկյան կառավարությունը պետք է աշխատի Արցախի կառավարության հետ՝ արցախցիների պատմական հայրենիք ապահով վերադարձի կազմակերպման համար: Այս մասին Alpha News-ի հետ զրույցում ասաց ԱՄՆ Հայ դատի հանձնախմբի մամուլի քարտուղար Էլիզաբեթ Չուլջյանը:
«Մարտի 11-12-ին Ամերիկայի տարբեր նահանգներից Հայ դատի հանձնախմբի ներկայացուցիչները եկել են Վաշինգտոն և հանդիպել 100-ից ավելի կոնգրեսական գրասենյակների հետ: Նրանց պատգամը մեկն էր՝ ամերիկյան կառավարությունը պետք է հստակ քայլեր ձեռնարակի Ադրբեջանի նկատմամբ պատժամիջոցներ կիրառելու հարցում: Երկրորդը՝ ամերիկյան կառավարությունը պետք է աշխատի միջազգային կառույցների, ինչպես նաև Արցախի կառավարության հետ, որ կարողանան ապահով կերպով կազմակերպել արցախցիների վերադարձն իրենց հայրենիք: Այս աշխատանքներում Ամերիկայի Հայ դատի հանձնախմբի արևելյան և արևմտյան շրջանների գրասենյակները աշխատակցել են մոտ 20 նահանգների ներկայացուցիչների հետ, որոնք եկել էին Վաշինգտոն այդ հանդիպումների համար: Այս ամենի հետ մեկտեղ իրականացվել են իրազեկման աշխատանքներ Արցախի և Հայաստանի անվտանգության վերաբերյալ, ինչպես նաև Ադրբեջանում բռնի պահվող Արցախի նախկին ղեկավարների և ռազմագերիների մասին»,- նշեց Չուլջյանը:
Նա նաև ընդգծեց, որ ամերիկյան կառավարությունը պետք է ռազմական օգնություն տրամադրի Հայաստանին՝ Ադրբեջանին դիմակայելու համար:

Text Link

Members of Congress Call for Reversing Artsakh Genocide, Safe Return of Armenians to Artsakh

Armenian American community leaders and coalition partners capped two full days on Capitol Hill – featuring more than 100 constituent-led meetings with lawmakers – with a Congressional rally for the safe return of Armenians to their indigenous Artsakh homeland, reported the Armenian National Committee of America.

The event, “Reversing Genocide: Securing the Rights and Safe Return of Artsakh’s Indigenous Armenians,” included Congressional remarks; a powerful keynote address by Dr. Elisa von Joeden-Forgey, Executive Director of the Lemkin Institute for Genocide Prevention; a compelling legal analysis by Karnig Kerkonian Esq., an international law expert and founding member of the recently launched Committee on the Protection of the Fundamental Rights of the Artsakh People; and, an inspiring closing speech by ANC Artsakh’s Gev Iskajyan, the newest member of the ANCA national team. The invocation was given by the Very Rev. Fr. Sahag Yemishian, Vicar General of the Armenian Church of America.

Legislators who offered remarks were Senator Ed Markey (D-MA), Congressional Armenian Caucus Co-Chair Frank Pallone (D-NJ), and Representatives Gabe Amo (D-RI), Judy Chu (D-CA), Jim Costa (D-CA), Seth Magaziner (D-RI), and Brad Schneider (D-IL). Coalition partners participating in the evening program and this week’s Capitol Hill advocacy efforts included the Hellenic American Leadership Council, In Defense of Christians, and the Middle East Forum.

“The road to return starts here, it starts now – with the affirmation of Artsakh’s rights in capitals around the world and the ultimate realization of these rights upon Artsakh’s sacred soil,” said ANCA Executive Director Aram Hamparian, who served as master of ceremonies.

Text Link

«Ցեղասպանության հակադարձում. Արցախի բնիկ հայերի իրավունքների և անվտանգ վերադարձի ապահովում» խորագրով

քննարկում ԱՄՆ Կոնգրեսում

Հայ դատի Ամերիկայի հանձնախմբի կազմակերպմամբ՝ ԱՄՆ Կոնգրեսում մարտի 13-ին կայացել է «Ցեղասպանության հակադարձում. Արցախի բնիկ հայերի իրավունքների և անվտանգ վերադարձի ապահովում» խորագրով քննարկում՝ ավելի քան մեկ տասնյակ կոնգրեսականների, փորձագետների, Կոնգրեսի աշխատակիցների, համայնքի ներկայացուցիչների և լրատվամիջոցների ներգրավվածությամբ: Մասնավարապես, ուշագրավ ելույթներով են հանդես եկել Ցեղասպանության կանխարգելման Լեմկինի ինստիտուտի գործադիր տնօրեն Էլիզա ֆոն Յոդեն-Ֆորգին, միջազգային իրավունքի փորձագետ և վերջերս ստեղծված Արցախի ժողովրդի հիմնարար իրավունքների պաշտպանության հանձնախմբի անդամ Գառնիկ Քերքոնյանը, վերջերս Հայ դատի Ամերիկայի հանձնախմբին միացած, իսկ նախկինում Հայ դատի Արցախի հանձնախմբի աշխատակից Գև Իսկաջյանը:
Կոնգրեսականներից ելույթ են ունեցել սենատոր Էդ Մըրքին, Կոնգրեսի հայկական հարցերով հանձնախմբի համանախագահ Ֆրենք Փալոնը, Կոնգրեսի ՆՓ անդամներ Գաբե Ամոն, Ջուդի Չուն, Ջիմ Կոստան, Սեթ Մագազիները և Բրադ Շնայդերը: Հայ դատի Ամերիկայի հանձնախմբի գործընկեր համայնքային կազկակերպություններից քննարկմանը ներկա էին «Ամերիկա-հունական առաջնորդության խորհուրդ» և «Քրիստոնյաների պաշտպանություն» կազմարեպությունների ներկայացուցիչները: Քննարկման մոդերատորն էր Հայ դատի Ամերիկայի հանձնախմբի Վաշինգտոնի գրասենյակի գործադիր տնօրեն Արամ Համբարյանը:

Text Link

Gev Iskajyan Joins ANCA as National Grassroots Director

The Armenian National Committee of America welcomed Gev Iskajyan as its national grassroots director during Capitol Hill advocacy days last week as part of its ongoing commitment to expand Armenian American participation in federal, state, and local policy-making and build coalitions to advance pro-Artsakh/Armenia and community priorities.
“We are excited to welcome Gev Iskajyan to lead our national grassroots development effort, as we embark on a bold new journey to fortify our local communities and amplify the Armenian American voice across the United States,” stated ANCA Chairman Raffi Hamparian. “With Gev’s leadership, working closely with our regional and local chapters, we forge ahead, united in our commitment to empower our people and advance our common cause. Together, we will build new and stronger bridges, elevate voices, and ensure that our presence resonates with elected officials across our nation,” the ANCA Chairman added.
Gev Iskajyan has spent the last two years in Artsakh serving as the Executive Director of the ANC Artsakh — working on diplomatic efforts abroad, shedding light on the plight of the people in Artsakh, and helping with relief efforts in the homeland. Iskajyan has previously served on the ANCA Western Region Board, chaired the Armenian Youth Federation (AYF) Western US, and served as editor of AYF’s Haytoug Magazine. As a member of the All-ASA board in 2016, Iskajyan helped spearhead the Divest Turkey initiative. On the centennial of the Armenian Genocide, Iskajyan served as Executive Director Armenian Genocide Commemorative Committee, which brought together over 100,000 Armenian Americans and allies for the ‘March for Justice.’ Iskajyan has also written for numerous publications, including Time Magazine and Newsweek, and has been featured by outlets such as CNN, BBC, Politico, and the LA

Times. He attended Cal Poly University – Pomona, where he studied Political Science and Philosophy.

Text Link

ANCA Chairman Urges Congressional Leaders to Publicly Demand Biden Hold Azerbaijan Accountable for Artsakh Genocide

Armenian National Committee of America (ANCA) Chairman Raffi Hamparian called on Congressional leaders to publicly pressure the Biden Administration to take immediate action to hold Azerbaijan accountable for its genocide of Artsakh, and forcefully advocate for the safe and secure right of return for Artsakh's Armenians.
In a March 21st letter to the leadership of the House and Senate, in addition to the leadership of the House and Senate Committees on Foreign Affairs, Armed Services, and Appropriations, Hamparian issued a scathing rebuke of the Biden Administration's failure to prevent Azerbaijan's genocide of Artsakh's Armenians and its ongoing refusal to hold its dictatorial regime accountable for its aggression, noting the Administration's refusal to heed the calls of dozens of bipartisan lawmakers in a series of letters and resolutions urging an immediate response to Azerbaijan's blockade of Artsakh last year – which saw the region's 120,000 Armenians deprived of access to food, fuel, medicine and humanitarian goods for 10 months. Hamparian stated the Biden Administration "not only failed to constrain Azerbaijan – but repeatedly enabled and emboldened Baku's aggression."
Specifically, the letter highlighted the Biden Administration's refusal to impose meaningful costs on Azerbaijan by:
— Reauthorizing military assistance to Azerbaijan despite a campaign promise to enforce Section 907 of the FREEDOM Support Act, even in the wake of Azerbaijan's occupation of sovereign Armenian territory in 2021 and its blockade on Artsakh in 2023.
— Failing to declare Azerbaijan's 10-month siege of Artsakh a humanitarian crisis – legitimizing Baku's use of starvation as a tool of negotiation.
— Ruling out the use of sanctions to constrain Azerbaijan's aggression in a public statement by Special Advisor for Caucasus Negotiations Lou Bono – undermining U.S. leverage over Baku.
— Refusing to impose consequences on Azerbaijan following its military assault on Artsakh, despite having indicated during a hearing before the Senate Foreign Relations Committee that the U.S. would "not countenance any attempt at ethnic cleansing."
— Committing only $15 million in humanitarian assistance to the 120,000 refugees forced from their homes by Azerbaijan – incommensurate with the dire needs of those displaced.
— Resuming high-level engagement with Azerbaijan in the absence of accountability – despite a commitment by Assistant Secretary of State for Europe and Eurasia James O'Brien that there would be "no business as usual" with Azerbaijan following its assault on Nagorno-Karabakh.
— Legitimizing a fundamentally asymmetric and unjust "peace process" between Armenia and Azerbaijan without demanding the immediate withdrawal of Azerbaijani forces from Armenian territory or an internationally guaranteed right of return for Artsakh's Armenians.
— Authorizing the sale of F-16s and other defense articles to the Republic of Turkey,

despite Turkey's track record of regional destabilization – from its occupation of Cyprus, attacks on Kurdish populations in Syria and Iraq, and its support for Azerbaijan's ethnic cleansing of Artsakh and occupation of sovereign Armenian territory.
Text Link

Հայ դատի Ամերիկայի հանձնախմբի նախագահը Կոնգրեսի ղեկավարներին հորդորել է ԱՄՆ վարչակազմին ստիպել՝ պատասխանատվության ենթարկել Ադրբեջանին՝ Արցախում ցեղասպան գործողություններ իրականացնելու համար

Հայ դատի Ամերիկայի հանձնախմբի նախագահ Ռաֆֆի Համբարյանը Կոնգրեսի առաջնորդներին կոչ է արել հրապարակայնորեն ճնշում գործադրել Բայդենի վարչակազմի վրա, որպեսզի վերջինս անհապաղ միջոցներ ձեռնարկի՝ Արցախում ցեղասպան գործողություններ իրականացնելու համար Ադրբեջանին պատասխանատվության ենթարկելու և արցախահայության անվտանգ և ապահով վերադարձի իրավունքն ուժով պաշտպանելու ուղղությամբ:
Մարտի 21-ին Սենատի և Ներկայացուցիչների պալատի ղեկավարությանը, զույգ պալատների արտաքին հարցերի, ռազմական ծառայությունների և հատկացումների հանձնաժողովների նախագահներին հասցեագրված նամակով՝ Համբարյանը խիստ հանդիմանել է Բայդենի վարչակազմի ձախողումն Ադրբեջանի կողմից Արցախի հայերի ցեղասպանությունը կանխելու և բռնապետական վարչակարգին իր ագրեսիայի համար պատասխանատվության ենթարկելու գործում: Համբարյանը նկատել է՝ վարչակազմը շարունակապես հրաժարվում է ականջալուր լինել տասնյակ օրենսդիրների կոչերին, բարձրաձայնված մի շարք նամակներում և բանաձևերում, որտեղ կոչ է արվում անհապաղ արձագանքել անցյալ տարի Ադրբեջանի կողմից Արցախի շրջափակմանը, ինչի հետևանքով տարածաշրջանի 120.000 հայերը 10 ամսով զրկվեցին սննդի, վառելիքի, դեղորայքի և մարդասիրական ապրանքների հասանելիությունից: Համբարյանը հայտարարել է՝ Բայդենի վարչակազմը «ոչ միայն չկարողացավ կաշկանդել Ադրբեջանին, այլև բազմիցս խթանել և քաջալերել է Բաքվի ագրեսիան»:
Նամակում, մասնավորապես, ընդգծվում են Բայդենի վարչակազմի կողմից ձեռնարկված այն քայլերը, որոնց արդյունքում Ադրբեջանը պատասխանատվության չի ենթարկվել.

Text Link

Հայ դատի Եվրոպայի գրասենյակ

Ռուսաստանի հետ հարաբերությունները սրելն այդքան էլ ճիշտ չէ, պետք է

ճկուն քաղաքականություն վարել. Գասպար Կարապետյան

ՀՅԴ Հայ դատի Եվրոպական գրասենյակի նախագահ Գասպար Կարապետյանը կարծում է, որ բանաձևերը պատժիչ ուժ չունեն, պարտավորեցնող չեն, բայց ունեն իրենց բարոյական ազդեցությունը և որքան դրանք կրկնվեն, այնքան կմոտենա որոշումից չխուսափելու պահը:

> «Կան որոշ արտահայտություններ, որոնք Ադրբեջանի համար ցավոտ են: Բացի Ադրբեջանին դատապարտելը և արցախահայերի վերադարձն ապահովելու պահանջ ներկայացնելը, խոսվում է նաև Ալիևի և իր շրջապատի դեմ, հարկ եղած դեպքում նաև էներգետիկ հատվածի մասով պատժամիջոցներ կիրառելու մասին:

Մեզ համար դրական են այս երկու զեկուցումներում եղած 4-5 նախադասությունը, որոնցում խոսվում է Արցախի, Ադրբեջանի և Հայաստանի միջև համաձայնության մասին: Նաև կարևոր է այն կոչը, որն ուղղված է Գործադիրին՝ ուժերի կարողության չափ օժանդակել Հայաստանին, որպեսզի զորանա և կարողություն ունենա ինքն իրեն պաշտպանելու:

Text Link



EAFJD on the EP resolution on EU-Armenia relations: “Complementary foreign policy is the path to follow for Armenia for the sake of a strong and vital Armenian statehood”

STATEMENT

European Parliament

EAFJD ON THE EP RESOLUTION ON EU-ARMENIA RELATIONS:
“Complementary foreign policy is the path to follow for Armenia for the sake of a strong and vital Armenian statehood”

On March 13, the European Parliament adopted a resolution on “closer ties between the EU and Armenia and the need for a peace agreement between Azerbaijan and Armenia”
EAFJD’s position on the resolution “The EAFJD is grateful to the European Parliament for its objective stance on Azerbaijan’s destructive policy towards Nagorno Karabakh and the Republic of Armenia. As a pan-European grassroot organisation the EAFJD and its committees have been actively working towards and will always advocate for stronger, closer and more dynamic ties between Armenia and the EU. In the

meanwhile, considering the geopolitical realities in the region, complementary foreign policy is the path to follow for Armenia for the sake of a strong and vital Armenian statehood."

Among other stipulations, the resolution of the European Parliament

- suggests considering a candidate status for EU Membership of Armenia, provided it is interested and meets the Copenhagen criteria
- warns Azerbaijan against any potential military adventurism against Armenia proper; highlights that Azerbaijan's connectivity issues with its exclave of Nakhchivan should be resolved with full respect for the sovereignty and territorial integrity of Armenia;
- Calls on Azerbaijan to genuinely engage in a comprehensive and transparent dialogue with the Karabakh Armenians to ensure respect for their rights and guarantee their security, including their right to return to and live in their homes in dignity and safety under international presence,
- Underscores that the EU should be ready to impose sanctions on any individuals and entities that threaten the sovereignty, independence and territorial integrity of Armenia,
- Recognises the urgent need to strengthen the cooperation between the EU and Armenia in the field of security and defence.

Text Link

STATEMENT

EAFJD ON THE EP RESOLUTION ON EU-ARMENIA RELATIONS:
"Complementary foreign policy is the path to follow for Armenia for the sake of a strong and vital Armenian statehood"

ՀՅԴ Հայ դատի Եվրոպայի գրասենյակի մեկնաբանությունը Եվրոպական խորհրդարանի վերջին բանաձևի առթիվ

Եվրոպական խորհրդարանը 2024թ. մարտի 13-ին ընդունել է «Եվրոպական միության և Հայաստանի միջև կապերի սերտացման և Ադրբեջանի ու Հայաստանի միջև խաղաղության համաձայնագրի անհրաժեշտության մասին» բանաձևը:

ՀՅԴ Հայ դատի Եվրոպայի գրասենյակի դիրքորոշումը հիշյալ բանաձևի վերաբերյալ հետևյալն է.

Հայ դատի Եվրոպայի գրասենյակը երախտապարտ է Եվրոպական խորհրդարանին՝ Արցախի և Հայաստանի Հանրապետության նկատմամբ Ադրբեջանի ապակառուցողական քաղաքականության վերաբերյալ օբյեկտիվ դիրքորոշման համար: Իբրև համաեվրոպական բնույթի համայնքային կազմակերպություն՝ Հայ դատի Եվրոպայի հանձնախումբը և իր տեղական հանձնախմբերն ակտիվորեն աշխատել են և աշխատելու են Հայաստանի և ԵՄ-ի միջև ավելի ամուր, սերտ և դինամիկ կապերի հաստատման համար: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով տարածաշրջանի աշխարհաքաղաքական իրողությունները, փոխլրացնող արտաքին քաղաքականությունը Հայաստանի համար այն ուղին է, որով պետք է առաջ շարժվել՝ հանուն ամուր և կենսունակ հայկական պետականության:

Նկատենք՝ ի թիվս այլ դրույթների, Եվրոպական խորհրդարանի բանաձևը՝

– առաջարկում է դիտարկել Հայաստանին ԵՄ անդամակցության թեկնածուի կարգավիճակի տրամադրումը՝ պայմանով, որ Հայաստանը շահագրգռված է և համապատասխանում է «Կոպենհագենյան չափանիշներին»:

– նախազգուշացնում է Ադրբեջանին՝ Հայաստանի նկատմամբ ցանկացած հնարավոր ռազմական արկածախնդրության համար և ընդգծում՝ Նախիջևանի էքսկլավայի հետ Ադրբեջանի կապի խնդիրները պետք է լուծվեն Հայաստանի ինքնիշխանության և տարածքային ամբողջականության նկատմամբ լիակատար

հարգանքով:
– Ադրբեջանին կոչ է անում անկեղծորեն ներգրավվել Լեռնային Ղարաբաղի հայերի հետ համապարփակ և թափանցիկ երկխոսության մեջ՝ ապահովելու նրանց իրավունքների հարգանքը և երաշխավորելու նրանց անվտանգությունը, ներառյալ միջազգային ներկայության ներքո իրենց տներն արժանապատիվ և ապահով կերպով վերադառնալու և ապրելու իրավունքը:
– Ընդգծում է՝ ԵՄ-ն պետք է պատրաստ լինի պատժամիջոցներ կիրառել ցանկացած անձանց և կազմակերպությունների նկատմամբ, որոնք սպառնում են Հայաստանի ինքնիշխանությանը, անկախությանը և տարածքային ամբողջականությանը,
– Ընդունում է անվտանգության և պաշտպանության ոլորտում ԵՄ-ի և Հայաստանի համագործակցության ամրապնդման հրատապ անհրաժեշտությունը:

Text Link

Բրյուսելում բացվել է ՀՅԴ Հայ դատի Եվրոպայի հանձնախմբի նոր գրասենյակը

Մարտի 24-ին Բրյուսելում տեղի է ունեցել ՀՅԴ Հայ դատի Եվրոպայի հանձնախմբի նոր գրասենյակի բացման արարողությունը. նշանակալի իրադարձություն նրա հիմնադրությունից՝ 2002 թվականից ի վեր:
Ի խորհրդանշում Հայ դատի առաքելության օժանդակման՝ կարմիր ժապավենը կտրել են Մայք և Էվելինա Սարյանները, որոնց ընտանիքի առատաձեռն նվիրատվության շնորհիվ էլ ձեռք է բերվել նոր գրասենյակը: Բացման արարողությանը ներկա են գտնվել տասնյակ հյուրեր, այդ թվում՝ ՀՅԴ Հայ դատի Եվրոպայի գրասենյակի երկարամյա բարերարներ Ռաֆֆի Արսլանյանը և Ատոմ Թենջուկյանը, ՀՅ Դաշնակցության Բյուրոյի ներկայացուցիչ և Հայ դատի հանձնախմբերի կենտրոնական խորհրդի նախագահ Հակոբ Տեր-Խաչատուրյանը, Եվրոպական միությունում ՀՀ առաքելության ղեկավարի տեղակալ Վարդան Սարգսյանը, բելգիացի պատգամավորներ, լրագրողներ, հասարակական գործիչներ, ինչպես նաև Բելգիայի, Կիպրոսի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Նիդեռլանդների, Ռումինիայի և Միացյալ Թագավորության հայ համայնքների ներկայացուցիչներ:
Բացման արարողությանը հաջորդած ընդունելության ընթացքում հնչած ելույթներում երախտագիտության խոսքեր են ձոնվել բոլոր նրանց, ովքեր իրենց ներդրումն են ունեցել եւ ունենում ՀՅԴ Հայ դատի Եվրոպայի գրասենյակի աշխատանքներին: Ներկաները, կարևորելով Հայ դատի Եվրոպայի գրասենյակի դերը առհասարակ Հայ դատի պաշտպանության գործում, իրենց բարեմաղթանքներն են հղել գրասենյակի ամենօրյա տքնաջան աշխատանքին:

Text Link

Inauguration of the New Office of the European Armenian Federation for Justice and

Democracy

With the inauguration of its new premises in Brussels on March 24, the European Armenian Federation for Justice and Democracy (EAFJD) celebrated a significant milestone, since its establishment in 2002.

The inauguration ceremony took place in the presence of Mr. and Ms. Mike and Evelina Sarian and his family, thanks to whose generous donation the EAFJD office was acquired. The event was also attended by dozens of esteemed guests, including long-standing EAFJD benefactors Raffi Arslanian and Atom Tenjoukian, the Chairman of Armenian Revolutionary Federation and the President of the Central Board of Armenian National Committees Hagop Der Khatchadourian, Deputy Head of Mission of the Republic of Armenia to the European Union, Mr. Vardan Sargsyan, Belgian MPs, journalists, public figures, and the representatives of the Armenian communities of Belgium, Cyprus, France, Germany, Netherlands, Romania and the United Kingdom.

The official inauguration commenced with the ceremonial ribbon-cutting by Mike and Evelina Sarians, alongside the Chairman of Armenian Revolutionary Federation and the President of the Central Board of Armenian National Committees Hagop Der Khatchadourian and the EAFJD President, Kaspar Karampetian symbolizing support for the EAFJD's mission and collaborative efforts. The ceremony was followed by a reception during which speeches were delivered, reflecting on the significance of the occasion, expressing gratitude to all who contributed to EAFJD's work.

Text Link

Բրյուսելում բացվել է ՀՅԴ Հայ դատի Եվրոպայի հանձնախմբի նոր գրասենյակը - Արմենպրես

ՀՅԴ Հայ դատի Եվրոպայի հանձնախումբը Բրյուսելում նոր գրասենյակ է բացել: Գրասենյակի բացման արարողությունը տեղի է ունեցել մարտի 24-ին:
Բացման արարողությանը ներկա էին գրասենյակի գնման համար անհրաժեշտ գումարը նվիրաբերած բարերար ամուսիններ Էվելինա եւ Մայք Սարյանները, ԵՄ-ում ՀՀ առաքելության ներկայացուցչի տեղակալ Վարդան Սարգսյանը, Եվրոպական խորհրդարանի պատգամավորներ, Ֆլանդրիայից եւ Վալոնիայից քաղաքական ու հասարակական գործիչներ, Բելգիայի հայ համայնքի ներկայացուցիչներ:
Բրյուսելում «Արմենպրես»-ի թղթակցի փոխանցմամբ՝ ՀՅԴ Հայ Դատի Եվրոպայի հանձնախմբի նախագահ Գասպար Կարապետյանը բացման ելույթում նշեց՝ 2002 թվականին ՀՅԴ Հայ դատի Եվրոպայի հանձնախմբի հիմնադրումից ի վեր՝ սա գրասենյակի պատմության ամենանշանակալից իրադարձությունն է: «Հայ դատին նվիրածս 55 տարվա գործունեության ամենաերջանիկ օրն է: Սա մեր բոլորի տունն է, Հայ դատի պայքարը շարունակելու օրրանը: Խորհրդանշական է, որ մեր գրասենյակի դիմաց Հայաստանի դեսպանությունն է: Մեզ համար կարեւորը պետությունն է եւ հայ ժողովրդի բարեկեցությունը, դրա համար էլ մեր գործունությունը միշտ միտված է պետականամետ օրակարգերի», – նշեց Գասպար Կարապետյանը:

Text Link

Արցախի վերաբերյալ քննարկումներ Բելգիայի Սենատում

Բելգիայի Սենատում մարտի 25-ին տեղի է ունեցել «Աշխարհաքաղաքական զարգացումները Հարավային Կովկասում. կիզակետում Հայաստանը և Լեռնային Ղարաբաղը/Արցախը» խորագրով կլոր սեղան-քննարկում: Քննարկումը կայացել է սենատոր Մարկ Դեմեսմեյքերի և ՀՅԴ Հայ դատի Եվրոպայի գրասենյակի համագործակցության արդյունքում, որին մասնակցել են բելգիացի խորհրդարանականներ, դիվանագետներ, լրագրողներ և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ:
Կլոր սեղանի չորս հիմնական բանախոսներն էին.

- Էլս Վան Հուֆ՝ Բելգիայի դաշնային խորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ
- Փոլ Միերթս՝ միջազգային բանակցությունների վերլուծաբան և Քլինգենդաել ինստիտուտի համահիմնադիր
- Գեղամ Ստեփանյան՝ Արցախի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան
- Բենիամին Պողոսյան՝ «ԱՊՐԻ Արմենիա» հիմնադրամի ավագ գիտաշխատող

Համաժողովի առաջնային նպատակն էր համապարփակ վերլուծության ենթարկել 2020 թվականի սեպտեմբերից ի վեր Հարավային Կովկասի տարածաշրջանում աշխարհաքաղաքական զարգացումները, մասնավորապես՝ Արցախյան հակամարտության լույսի ներքո: Բանախոսները միջազգային իրավունքի, մարդու իրավունքների և միջազգային հանրության արձագանքի տեսանկյուններից ներկայացրեցրել են տարածաշրջանային զարգացումները: Հատուկ ուշադրություն են արժանացել միջնորդական ջանքերի կարևորության վերաբերյալ քննարկումները՝ անդրադարձ կատարելով հատկապես Եվրոպական միության դերին: Քննարկման մասնակիցները փորձել են նախանշել ապագա հեռանկարները, հնարավոր զարգացումները և կոնկրետ քայլերը՝ Արցախի հայերի անօտարելի իրավունքները պաշտպանելու համար:

Text Link

Belgian Senate Hosts Roundtable on Geopolitical Developments in South Caucasus: Focus on Armenia and Nagorno Karabakh/Artsakh

Today a roundtable discussion titled “The Geopolitical Developments in the South Caucasus: Focus on Armenia and Nagorno Karabakh/Artsakh took place at the Belgian senate.” The event, hosted by Senator Mark Demesmaeker (N-VA) in collaboration with the European Armenian Federation for Justice and Democracy (EAFJD), was widely attended by a diverse audience comprising Belgian parliamentarians, diplomats, journalists, and civil society representatives.
The roundtable featured four keynote speakers:
– Els Van Hoof: Chair of the Foreign Affairs Committee, Belgian Federal Parliament

– Paul Meerts: International negotiation analyst and co-founder of Clingendael Institute
– Gegham Stepanyan: Ombudsman of Nagorno Karabakh (Artsakh)
– Benyamin Poghosyan: Senior Research Fellow at the Applied Policy Research Institute of ArmeniaThe primary objective of the conference was a comprehensive analysis of geopolitical developments in the South Caucasus region since September 2020, particularly in light of the Nagorno Karabakh (Artsakh) conflict. The speakers provided insights from various perspectives, including international law, human rights, and the response of the international community. Special emphasis was placed on mediation efforts, with a particular focus on the role of the European Union. Additionally, the panelists elaborated on future prospects, exit strategies, and concrete steps to safeguard the inalienable rights of the Nagorno Karabakh/Artsakh Armenians.

Text Link

«Եվրոպացիները հանուն Արցախի» հարթակը քննարկել է Արցախի շահերի պաշտպանության ուղղությամբ առաջիկա անելիքները

«Եվրոպացիները հանուն Արցախի» հարթակը, մարտի 24-ին՝ Բրյուսելում, համախմբել է Եվրոպայի հայ համայնքների ներկայացուցիչներին՝ Արցախի շահերի պաշտպանության ուղղությամբ առաջիկա անելիքները քննարկելու համար: Քննարկմանը մասնակցել են Բելգիայի, Կիպրոսի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Նիդեռլանդների, Ռումինիայի, Միացյալ Թագավորության հայ համայնքների ներկայացուցիչները:
Քննարկման հիմնական օրակարգն ապրիլի 24ին ընդառաջ ողջ Եվրոպայում ոգեկոչման միջոցառումների կազմակերպական հարցերն էին՝ արցախյան հիմնախնդիրը միաժամանակ պահելով առանցքային հարց այդ ձեռնարկների ժամանակ:
Հիմնական քննարկումները ծավալվել են նաև ինքնորոշման և Արցախի ժողովրդի հավաքական վերադարձի հիմնարար իրավունքի շուրջ: Ընդգծվել է Հայաստան տեղահանված 150.000 արցախահայերի բնակարանային կարիքները հոգալու հրատապ պահանջը՝ իբրև ժամանակավոր բնակության վայրերում նրանց արժանապատիվ կյանքն ապահովելու անհրաժեշտություն, մինչև իրավունքների միջազգային պաշտպանությամբ Արցախի հայությունը կարողանա ապահով վերադառնալ հայրենիք:
Քննարկումների ընթացքում նաև անդրադարձ է կատարվել հայ համայնքների դերին առաջիկա համաեվրոպական ընտրություններում՝ ընդգծելով նոր խորհրդարանում Արցախի և Հայաստանի շահերի պաշտպանության հրամայականը:

Text Link

Europeans for Artsakh: Committed to Upholding Fundamental Rights of Artsakh Armenians

The “Europeans for Artsakh” platform brought together the representatives from Armenian communities across Europe in Brussels to collaborate on advancing the defense of the rights of Armenians in Artsakh/Nagorno-Karabakh. Representatives from the Armenian communities in Belgium, Cyprus, France, Germany, Netherlands, Romania, United Kingdom were present.

The main purpose of the ‘’Europeans for Artsakh’’ meeting was to exchange insights and discuss on the upcoming April 24 commemoration events throughout Europe, ensuring that the Artsakh issue remains central to these events.

Key discussions revolved around the fundamental rigths to self-determination and the collective return for the people of Artsakh. The urgent requirement to address the housing needs of the 150,000 displaced Artsakh Armenians in Armenia was emphasized. This underscores the necessity for ensuring their dignified existence in temporary locations until they can safely return to their homeland, with international safeguarding of their rights.

Moreover, discussions also touched upon the role of Armenian communities in the upcoming European elections, underscoring the imperative need to advocate for Artsakh and Armenia within the new European Authorities.

Text Link

The EAFJD strongly condemns the attack by Turkish extremists against Kurdish people in Belgium

The EAFJD stands in solidarity with the Kurdish community in Belgium

The European Armenian Federation for Justice and Democracy (EAFJD) strongly condemns the heinous attack perpetrated by Turkish extremists against Kurdish people in Heusden-Zolder, Belgium, on March 24, 2024.

Following the celebration of Kurdish Newroz in Leuven, Kurdish families were targeted and subjected to a violent assault while engaging in the festivities.

We express our solidarity with the affected Kurdish people and denounce the actions of the Turkish fascists involved in this attack. Their display of fascist Grey Wolf symbols and chants invoking the names of terrorist organizations like DAESH/ISIS is abhorrent and has no place in civilized societies, like Belgium.

Acts of violence and intimidation based on ethnic or ideological differences cannot be tolerated, and those responsible must be held accountable to the fullest extent of the law.

The EAFJD stands in solidarity with the Kurdish community in Belgium and reaffirms its commitment to promoting justice, freedom, and respect for human rights.

Text Link

Հայ դատի Կանադայի հանձնախումբ

Հայ Դատի յանձնախումբը

պատուեց Գանատայի Ծերակոյտի անդամ Լէօ Հուսաքոսը

Կազմակերպութեամբ ՀՅԴ Գանատայի Հայ Դատի յանձնախումբին, Կիրակի, 3 Մարտ 2024-ին, երեկոյեան ժամը 7-ին, Մոնթրէալի Հայ կեդրոնի «Արթօ եւ Ալիս Մարգարեան» ճաշասրահին մէջ տեղի ունեցաւ ընդունելութիւն, ի պատիւ Գանատայի Ծերակոյտի անդամ Լէօ Հուսաքոսի, ներկայութեամբ ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր Խաչատուրեանի, ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէի, Լաւալի եւ Մոնթրէալի կոմիտէներուն ու Հայ Դատի յանխձնախումբերուն, պատկան մարմիններու Հայ կեդրոնի հովանիին ներքոյ գործող միութիւններու եւ Մոնթրէալ-Լաւալ շրջանին մէջ գործող հայկական կազմակերպութիւններու ներկայացուցիչներու:
Բարի գալուստի խօսքով հանդէս եկաւ Լաւալի Հայ Դատի յանձնախումբի ատենապետ Հերակ Հերկելեան, որ իր խօսքին մէջ նախ ողջունեց ծերակուտականի տարիներէ վրայ երկարող անդամն ու իր որդեգրած հայանպաստ կեցուածքը, ինչպէս նաեւ Արցախի շրջափակման եւ արցախահայութեան բռնագաղթի ենթարկման առնչութեամբ անոր հրապարակաւ եւ պետական ոլորտներէն ներս բարձարաձայնումն ու դատապարտումը:

Text Link

Հայ դատի Հունաստանի հանձնախումբ

Հայոց ցեղասպանութեան նուիրուած յուշարձան պիտի կանգնի Փիրէայի մէջ

Հ.Յ.Դ. Գոքինիոյ «Վարանդեան» կոմիտէի ջանքերով եւ Հայ դատի յանձնախումբի օժանդակութեամբ, Փիրէայի քաղաքապետական խորհուրդը որոշեց յատուկ յուշակոթող մը կանգնեցնել Փիրէայի կեդրոնին մէջ, յարգելու համար յիշատակը Հայոց ցեղասպանութեան անհամար զոհերուն, միաժամանակ երախտագիտութիւն յայտնելով Փիրէայի եւ շրջակայքին մէջ ապրող հայութեան:
Երկուշաբթի, 26 Փետրուար 2024-ի երեկոյեան, Փիրէայի քաղաքապետական շէնքին մէջ, քաղաքապետական խորհուրդը իր նիստը գումարեց, որու օրակարգերու շարքին ներառնուած էր նաեւ յուշակոթողի հարցը: Նշենք, որ անցնող ժամանակաշրջանին, հայկական կողմի նախաձեռնութեամբ, տեղի ունեցան հանդիպումներ եւ առաջարկի ներկայացումը, իսկ հայասէր քաղաքապետ Եաննիս Մորալիս ջերմօրէն ընդառաջեց յուշարձանի զետեղման քաղաքի ծանօթ հրապարակներէն մէկուն վրայ:
Քաղաքապետական խորհուրդի նիստին ընթացքին բոլոր խօսք առնողները իրենց հաւանութիւնը տուին հայութեան առաջարկին, ապա որոշումը կայացաւ միաձայնութեամբ:

Text Link

Գանատայի Պահպանողական կուսակցութեան առաջնորդի տեղակալ Մելիսա Լանթսմանի հետ հանդիպման ընթացքին Հայ Դատի յանձնախումբը արծարծեց Արցախի հարցը

Մարտ 16-ին, Գանատայի խորհրդարանի անդամ եւ Գանատայի Պահպանողական կուսակցութեան առաջնորդի տեղակալ Մելիսա Լանթսման այցելեց Մոնթրէալի Հայ Կեդրոն, ուր հիւրընկալուեցաւ Գանատայի Հայ Դատի յանձնախումբի պատուիրակութեան կողմէ: Տիկին լանթսմանի կը՝ընկերակցէր ծերակուտական Լէօ Հուսաքոս: Գանատայի ընդդիմադիր կուսակցութեան փոխ առաջնորդին հետ հանդիպման ներկայ էին նաեւ Մոնթրէալի Հայ Կեդրոնէն ներս գործող միութիւններու, կազմակերպութիւններու եւ հաստատութիւններու ներկայացուցիչները:
Հանդիպման ընթացքին, Գանատայի Հայ Դատի յանձնախումբի նախագահ Խորէն Տիմիթեան անդրադարձաւ Արցախի հիմնահարցին, Ատրպէյճանի մէջ կալանքի տակ գտնուող հայ ռազմագերիներուն, Արցախի պատմական յուշարձաններու դէմ իրագործուող ատրպէյճանական վայրագութիւններուն եւ Արցախահայութեան ազգային ինքնորոշման իրաւունքին, շեշտելով, որ Արցախի եւ արցախահայութեան այսօրուան իրավիճակը Գանատայի հայ համայնքը յուզող գլխաւոր հարցերն են:

Text Link

Գանատայի Արեւմտեան շրջանի Հայ Դատի յանձնախումբը Արցախի հարցը արծարծեց Գանատայի մէջ ԱՄՆ-ի դեսպան Տէյվիտ Լ. Գոհէնի հետ

16 Մարտին, Վանգուվրրի մէջ կայացած SUCCESS բարեսիրական հիմնարկի տարեկան ընդունելութեան ներկայ գտնուեցան Գանատայի Հայ Դատի յանձնախումբի Արեւմտեան շրջանի ներկայացուցիչներ Վահէ Անտոնեան, Վանեսա Պարտագճեան Յակոբեան, Մեղրիկ Սիլահեան եւ Սեւան Յակոբեան, որոնք այդ ընթացքին առիթը ունեցան առանձնազրոյց ունենալու բարեսիրական միջոցառման ներկայ Օթթաուայի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Տէյվիտ Լ. Գոհէնի հետ: Հայ Դատի յանձնախումբի ներկայացուցիչները արծարծեցին Հայաստանի եւ Հարաւային Կովկասի տարածաշրջանին մէջ մարդկային իրաւանց խախտումները եւ յատկապէս 150 հազար արցախահայերու բռնի տեղահանումը իրենց պապենական հայրենիքէն՝ Արցախի Հանրապետութենէն: Հայ Դատի յանձնախումբի պատուիրակութեան անդամները անդրադարձան նաեւ բռնագրաւուած տարածքներուն մէջ ատրպէյճանցիներու կողմէ իրականացուող մշակութային շարունակական ցեղասպանութեան, արտայայտելով իրենց հիասթափութիւնը ԱՄՆ-ի կողմէ այդ գործողութիւնները կասեցնող որեւէ արարքի բացակայութեան հարցով, միաժամանակ կոչ ուղղելով

ԱՄՆ պետական պաշտօնատարին գործնականօրէն դատապարտելու Ատրպէյճանի եւ Թուրքիոյ յարձակողապաշտ վարքագիծը:

Text Link

Հայ դատի Մեծ Բրիտանիայի հանձնախումբ

Հայ դատի Մեծ Բրիտանիայի հանձնախմբի ուղեկցությամբ Արման Թաթոյանը հանդիպումներ է ունեցել բրիտանական քաղաքական շրջանակների հետ

Միացյալ Թագավորության և Իռլանդիայի հայոց թեմի առաջնորդ Հովակիմ Սրբազանի հրավերով Լոնդոնում գտնվող Հայաստանի մարդու իրավունքների նախկին պաշտպան Արման Թաթոյանը մարտի 17-ին Լոնդոնի «Նավասարդյան» կենտրոնում հանդիպել է Մեծ Բրիտանիայի հայ համայնքի հետ: Միջոցառումն անցկացվել է Միացյալ Թագավորության և Իռլանդիայի հայոց թեմի հովանու ներքո, Միացյալ Թագավորության Հայ դատի հանձնախմբի համակազմակերպմամբ:
Արման Թաթոյանը ներկայացրել է Ադրբեջանի ներխուժումը Հայաստանի միջազգայնորեն ճանաչված սահմանից ներս՝ հատկապես Ներքին Հանդ, տեղում ստեղծված հումանիտար իրավիճակը, քննարկել ցեղասպանական շրջափակումից հետո Արցախի բնիկ հայ բնակչության էթնիկ զտումները և անդրադարձել Հայաստանում սահմանադրական փոփոխությունների խնդրին: Միջոցառման մասնակիցները նաև շեշտել են սփյուռքի համախմբման կարևորությունը՝ հայ ժողովրդի իրավունքների պաշտպանության գործում: Համայնքի անդամները բանախոսին հարցեր ուղղելու հնարավորություն են ունեցել:

Text Link

Հայ դատի Ավստրալիայի հանձնախումբ

19 Australian Federal Parliamentarians Sign Joint Justice Initiative Supporting Australian Recognition of the 1915 Genocides

In 2023, the Joint Justice Initiative secured support from 19 Federal Parliamentarians, who have officially signed the Joint Justice

Initiative's Affirmation of Support Document calling for Australian recognition of the 1915 Armenian, Assyrian and Greek Genocides, reported the Armenian National Committee of Australia.
In total, nine Parliamentarians elected to the House of Representatives signed the support document, including Dr Sophie Scamps MP – Member for Mackellar, Allegra Spender MP – Member for Wentworth, Jerome Laxale MP – Member for Bennelong, Zali Steggall MP – Member for Warringah, Henry Pike MP – Member for Bowman, Stephen Bates MP – Member for Brisbane, Max Chandler-Mather MP – Member for Griffith, Gavin Pearce MP – Member for Braddon and Elizabeth Watson-Brown MP – Member for Ryan.
A total of 11 Senators met with representatives of the Joint Justice Initiative in 2023 who agreed to support the Armenian, Assyrian and Greek communities, including Senator Jonno Duniam – representing Tasmania; Senator Mathew O'Sullivan – representing Western Australia; Senator Wendy Askew – representing Western Australia; Senator Lidia Thorpe – representing Victoria; Senator David Shoebridge – representing New South Wales; Senator Dorinda Cox – representing Western Australia; Senator Penny Allman-Payne – representing Queensland; Senator Dave Sharma – representing New South Wales and Senator Maria Kovacic – representing New South Wales.

Text Link

Armenian Legal Center

ALC submission to UN Working Group on Enforced or Involuntary Disappearances

The International and Comparative Law Center of Armenia, under the auspices of the Armenian Legal Center for Justice and Human Rights, formally submitted eight cases to the United Nations Working Group on Enforced or Involuntary Disappearances on March 5, 2024.
At the forefront of the quest for justice and accountability, the International and Comparative Law Center of Armenia has undertaken a formidable task at the behest of the families of enforced or involuntary disappeared persons, pursuing eight cases of enforced or involuntary disappearances, each poignant in its representation of the suffering and anguish endured by the people of Artsakh. The predominant victims in these cases are servicemen, serving as stark symbols of Azerbaijan's relentless aggression and its policy aimed at the obliteration of the Armenian populace.
Tasked with a solemn mandate, the U.N. Working Group, a specialized entity established under the aegis of the United Nations Human Rights Council, stands as a beacon of hope in the global pursuit of truth and justice. Its purview encompasses the meticulous investigation of disappearances, spanning continents and cultures, with an unwavering commitment to unraveling the mysteries surrounding missing persons and holding perpetrators accountable.

Text Link

ՄԱԿ-ի հարկադիր և ակամա

անհետացածների հարցերով աշխատանքային խմբին են ներկայացվել ութ հայ զինվորականների գործեր

«Միջազգային և համեմատական իրավունքի հայկական կենտրոնը» (նախագահ՝ Սիրանուշ Սահակյան), Հայ դատի համակարգում գործող «Արդարադատության և մարդու իրավունքների հայկական իրավական կենտրոնի» հովանու ներքո, 2024թ. մարտի սկզբին պաշտոնապես հայ ութ զինվորականների գործեր է ներկայացրել ՄԱԿ-ի հարկադիր կամ ակամա անհետացածների հարցերով աշխատանքային խմբին: Բոլոր գործերը ներկայացվել են տուժողների ընտանիքների հետ համագործակցաբար:
ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդի կողմից ստեղծված հիշյալ աշխատանքային խմբի մանդատը ներառում է մարդկանց անհետացումների մանրակրկիտ հետաքննություն՝ բացահայտելու վերջիններիս անհետացման հանգամանքները, ինչպես նաև մեղավորներին պատասխանատվության ենթարկելու իրավական հիմքի ձևավորում:
Ներկայացված գործերից յուրաքանչյուրում տուժած զինվորական անձինք եղել են կամ զորակոչված, կամ կամավոր զինծառայողներ: Ցավոք, որոնողափրկարարական աշխատանքների արդյունքում հայտնաբերված աճյունները չեն նույնականացվել որպես անհայտ կորած անձանց մասունքներ: Ներկայացված գործերին կցվել են անհետ կորած անձանց ծառայակիցների բազմաթիվ վկայություններ, որոնք ի ցույց են դնում ադրբեջանական զինված ուժերի ահաբեկչական բնույթն ու պատերազմական հանցագործությունները: Վկայություններ կան զինծառայողներից մեկի անձնուրաց վարքի մասին, ով, առաջնահերթություն տալով իր վիրավոր ծառայակիցներին բուժօգնություն ցուցաբերելուն, հրաժարվել է դրանից և ներկայումս համարվում է անհետ կորած:

Text Link

Հայ դատի Կենտրոնական խորհուրդ | +374-10-52-19-66 | www.ancnews.info

Armenian Cause Foundation | Mkher Mkrtchyan 12/1 | Yerevan, 0010 AM

Unsubscribe | Update Profile | Constant Contact Data Notice

Constant Contact

Try email marketing for free today!